«Ի՞նչ կեանք զասանչանաց և զբանիցն զփորձ առին». — Եղիշէ, Երեմիա, Մխիթա։
«Զկապանաց և զբանդից». — Ուրիա, Ցովէա։
«Զարիկոծեցան». — Նաբովթ, Զաքա իս։
«Ողոցեցան». — Եսայի։
«Փորձեցան» — Զորաքարել. Մէքէէ։
«Պատնամամբ սրոյ մեռան». — Ուրիա, Ցովէա։
«Շրջեցան լերդ մաշկոց». — Եղիա, Եղիսէէ։
«Կարօտեալք, նեղեալք». — Մարդա էքն զոր կն սիրեաց Աբէլու։
Ուր կ'ըսէ առաքեալ ի Թղթին առ. «Ցիտոս. Ապաց ոմն ի նոցանէ իւրեանց (սկ մարգարէն». ի լ. Ցեզիմենիդեսան հարցիկ ըղձութիւն։

Ի վերջ Ցայտնութեան յիշատակարան նորագիր. Ես Մարգարէս գնեցի ըզգիրքս ի հալալ արդեանց իմոց, և վերստին ընծայեցի վարագայ, յիշատակ ինձ և ծնողաց իմոց. հօրն իմոյ Մկրտչի» ...։

Ապա միւս այլ յիշատակարան՝ ընտիր բոլորագրով. «Ի մեծափառ սուրբ ուխտիս Ստեփէի սուրբ առաքելոյս՝ ծառա և սպասաւոր տերին Գրիգոր վարդապետ՝ ցանկացաւղ եղև աստուածաշունչ սուրբ տառիս. և առեալ զսա յիւր յիշատակ և ամենայն արեան մերձաւորաց, և զի վայելեսցէ ուսմամբ զամենայն ցկեանս իւր, և ոչ եղև հասու ըստ խորհրդոյն. այլ կարճաբերեալ եղեալ փոխեցաւ առ Քրիստոս. և ետ սակաւուց վաճառող տառիս եկն դարձեալ սկսաւ վիշել և ասել թէ ձեր փողն առէք և մեր աւետարանն տուք մեզ։ իսկ վանիցս արքեպիսկոպոսն Յովհաննէս հնգետասան հազար զահեկան դրամ տուաւ իւր քսակէն և խափանեաց գնորա վիճմունքն, ուստիւք և միաբանից փկայութեամբ ձեռամբ մեղնեցի Յովհաննէս վարդապետին, և մերոյ Մեսրոբ արքեպիսկոպոսի, և Ղազար եպիսկոպոսի վկայութեամբն. կնքով և մատանահարեաւ փակեաց, որ այլ մարդոյ բան չըլինի խաւսելոյ... ի թուիս Հայոց ՌՂԱ. ես անարժան սուտանուն Մինաս կազմեցի սուրբ աւետարանս. աղաչեմ յիշել...»։

Շարունակելի

ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ի ԼՈՆՏՐԱ

Անգղիացի հռչակաւոր վիպասանն, Վալտեր Պրզենթ, իւր մի նոր վիպասանութեան հարկաւոր եղած նիւթերը հաւաքելու համար՝ Լոնտրայի հասարակ ժողովրդեան կեանքն ուսումնասիրելով՝ զարմացաւ, տեսնելով որ Լոնտրայի բովանդակ արևելեան մասին մէջ, այսինքն գրեթէ մէկ միլիոն բնակչք կազմեալ քաղաքի մը, չի գտնուիր ոչ հասարակաց գրատուն մը, ոչ գրավաճառ, և ոչ օրագիր մը։

Տկարնսի բարերար և փառաւոր շաղաց հետևելով՝ ոչ միայն տեսաւ Լոնտրայի արևելեան մասին մեռելական կերպարանքը, տգեղութիւնը, ժողովրդեան ծանր գաղջութիւնը, անյայտելի տգի-

digitised by A.R.A.R.@

տութիւնն և անվայել հաճոյքները, այլ ամենայն ջանքով սկսաւ ուսումնասիրել այս իրաց դարմանը, և իւր Ամէն աստիճանի եւ պայմանի անձինք (All sorts and conditions of men) վերնագրով հրատարակած վիպասանութեան մէջ այնպիսի ազդու կերպով դուրս ցատկեցուց այս չարեաց ամէն տգեղութիւնը՝ որ բովանդակ Անգղիոյ խղճմտանքն արթնցուց և ցնցեց։

Աշխարհիս ամենէն մեծ վաճառատունը՝ ձգեալ յափունս ալևորին Թամիզի՝ որ տեսաւ երբեմն զհռովմայեցի վաճառականս և զփիւրենոսացի սեղանաւորս, յալ կողմն կ՚երկարէ իւր արուարձանները՝ որ կը կազմեն այն փառաւոր մայրաքաղաքը՝ յորում կատարեալ կը գտնուի ինչ որ հարստութիւն, արուեստ և զօրութիւն կրնայ երևակայել. իսկ 'ի ձախակողմն անվերջանալի և անպարդուղիներ, գործաւոր, աղքատ և թշուառ քաղաքի մը. թէպէտ ասա կը ժողովին կը խմբին այն վաճառքները՝ որք կարևոր են այլ և այլ մասանց ճարտարութեան, և ոչ միայն Անգղիոյ այլ գրեթէ բովանդակ աշխարհի գործածութեան։

Սակայն պէտք չէ չափազանցութեան տանիլք այս թշուառութեան գաղափարը, ինչպէս կ՚ընեն սովորաբար անգղիացի արմատականք և խռովարարք, որք քաղաքին այն մասը Սովացեալ Լոնտրա կը կոչեն։

Այս սովացեալ թաղին մէջ կատարուած վերջին մանրամասն և անթերի վիճակագիրք՝ ամենէն ցած աստիճանի դատարկապորտ և գրեթէ գինովութենէ միշտ յիմար անձանց թիւը տասնամեկ հազարի կը հասնին. իսկ բուն ճշմարիտ աղքատաց թիւը՝ որք անորոշ և միայն պատահական շահ մ՚ունին 100,000 է. այլք որք աղէկ կը շահին, բայց ոչ միշտ և շարունակեալ՝ 75,000. չափաւոր՝ այլ շարունակեալ թոշակ մ՚ընդունողաց թիւն է 127,000. իսկ 368,000 անձինք բաւական չափաւոր և կանոնաւոր վճարք մ՚ունին։

Արդ եթէ ենթադրենք որ գրեթէ մեծաւ մասամբ այսպիսի բազմաթիւ ժողովրդեան մը նիւթական պիտոյք հոգացուած և բաւական էին՝ սակայն չկար իրենց համար զբօսանաց և զուարճութեան տեղ մը, եթէ 'ի բաց առնունք գինետունները և ստորերկրեայ ախտավայրները։ Հիւանդաց, անկարողաց, ծերոց և կրօնական պիտոյից՝ հասարակաց գութն և ողորմութիւնը մեծաւ մասամբ հոգացեր էր. իսկ արդ հարցնենք թէ վարդեր Պրէյնթի վիպասանութեամբ երիտասարդներն և առողջներն ալ հոգալու պէտքն իմացուեցաւ՝ այնչափ փափագելի և գործադրելի թուեցաւ այս բանը՝ որ անմիջապէս մասնաժողով մը կազմուեցաւ այս նպատակաւ։ Խօսքով միայն գոհ չեղան, այլ քիչ ժամանակի մէջ մէկ ու կէս միլիոն ֆռանք հաւաքեցին, առանց հաշուելու նպաստամատոյց բա-

digitised by A.R.A.R.@

բերարաց տարեկան օգնութիւնն։ Բայց մանաւանդ ոյժն խնդրածը միայն դրամ չէր, և ոչ իսկ հասարակաց գործածութեան համար ընդարձակ չէնք մը կառուցանելը միակ նպատակ, ուստի հետեւեալ գիծաշարժ ծանուցումն ըրաւ՝ որ անունկնդիր չմնաց։

«Այն ամէնուն՝ որ մեզի հետ 'ի միասին կը զգան ժողովրդեան վիշտերը և պէտքերը, հարստաց և ամենուն որ կարող են օգնել նոյն իսկ ոչինչ դրամով՝ մը, յարուեստաւորաց և 'ի գործատրաց կը խնդրենք ժամանակ և անձնական ձեռնտուութիւն, երաժշտութենէ հասկցողաց՝ իրենց արուեստին օգնութիւնն։ այն ամէնը որք կը հաւատան և կը յուսան արուեստից քաղաքականացնող և զօրաւոր ազդեցութեան՝ կը խնդրենք որ օգնեն մեզի շահագրգիռ և գեղեցիկ միջոցներով. իսկ այն ամէնէն որ կը սիրեն այս ժողովուրդը և կը փափագին որ ազատի նա ի թմբրութենէ տգիտութեան, կրից և տխտից, կը խնդրենք իրենց օգնութիւնը ո՛ և իցէ կերպիւ»։

Այս կերպով կը ջանար կատարել մանաւանդ՝ ժողովրդեան այն ցած դասակարգի յիրաւի բուսական կեանքը՝ 'ի ճշմարիտ կեանս փոխարկելու մեծ գործը. անոր համար ջանաց այս հաստատութիւնը միշտ իր սահմանին մէջ պահել, այսինքն ժողովրդեան հանդստեան, պարապոյ և զուարճութեան տեղ մը պատրաստել. որ էր երիտասարդ մտքերու և սրտերու պատշաճ և կարեւոր պիտոյից օգնութեան համար, առանց ամենևին գծուած սահմանէն փոքրիկ կերպով մ'իսկ շեղելու։

Շինութիւնն սկսաւ այս գաղափարով. 'ի սխ և առաջ կեդրոնական ընդարձակ սրահը չինուեցաւ՝ որ պիտի ծառայէր նուագահանդիսից, թատերական ներկայացումներու, ճառախօսութեանց և պարերու։ Անհաւատալի արագութեամբ, հաստատուն և գեղեցիկ ճարտարապետութեամբ և առանց ամենևին ծախուց խնայելու կատարեցաւ այս շէնքը, զոր 1887 մայիս 14 ին հանդիսաւոր կերպով բացաւ թագուհին Վիկտորիա. այս սրահին երկայնութիւնն է 50 մէտր, լայնութիւնն 25, իսկ բարձրութիւնն 20։ Ձեղունը կամարակապ է և գոցուած ապակեայ փեղկեր, և ասուեվաճառաց ընկերութեան նշանադրոշմը կը կրէ, վասն զի ամենէն աւելի առատ տրիւք մասնակցեցաւ այս գործոյն։

Սրահին մէկ ծայրը հսկայագործ երգեհոն մը կայ. ձեղունին կամարները կը վերցնեն կորնթեան գեղեցիկ սիւներ, և այս սիւնոց միջավայրը՝ իրենց առաքինութեամբն հռչակաւոր քսանուերկու թագուհիներու արձանները կան։

5000 հոգւոյ համար նստարան կայ այս սրահին մէջ. այս նստարանները այնպէս շինուած են՝ որ կը ծածկուին սրահին յատակին

digitised by A.R.A.R.@

մէջ, եթէ պէտք ըլլայ մարմնամարզութեան խաղերու և կամ պարահանդէսներու համար։

Այս ընդարձակ սրահէն վերջը գրատունը չինուեցաւ, ընդարձակ ութանկիւն սրահ մը՝ ճիշտ նման Բրիտանական Մուսէոնին հսկայագործ գրատան. ցարդ 20,000 հատոր ա՛ի այս գրատունը, սակայն 250,000 հատորի տեղ կայ։ Գրոց մէջ նախամեծար են վիպասանութիւնքն. և բարեբաղդաբար անգղիական մատենագրութիւնն շատ ճոխ է յայսմ մասին։ Այնենէն ուելի կարդացուող հեղինակքն են Harrison, Ainsworth, Dickens, Braddon, Charles Reade և Maryat: Սակայն պատմական և ճանապարհորդական գրքեր ալ շատ կը փնտռուին։

Հակառակ անգղիական սովորութեանց, այս գրատունը կիրակի օրերն ևս բաց է հասարակաց, և ամբողջ օրը ընդարձակ սրահը լի է հետաքրքիր և ուշիմ ընթերցողներով. միջին հաշուով կիրակի օրերը 1750 անձինք կը յաճախեն այս գրատունը, իսկ աշխատութեան օրերը գրեթէ 1000 հոգի անպակաս են սրահէն։ Այս գրատան կից կան այլ փոքրիկ սենեակներ գրելու և առանձինն առանձնասիրութիւններ կատարելու համար. այս սենեակները երեկոյեան մատ կը ծառայեն ճատրակ և տանայ խաղացողներու. ընտրական պատմութեան փոքրիկ հաւաքածոյ մ՚ալ ունի այս հասարակութիւնս։

Լորա Ռոզպէրի՝ բաղանեաց համար ընդարձակ սրահ մը նուիրեց, որոյ առաղանը 25 մէտր երկայն է, և ըստ եղանակին պահանջմանց կը ջեռուցանեն։ Անցեալ տարի 100,000 հոգի լուացուեցան այս բաղանեաց մէջ, ու գրեթէ ամէնքն ալ մի և նոյն ժամանակ լողալու դասեր առին և առաջին փորձերնին հոն կատարեցին։

Այս հոչակաւոր հաստատութեան ամենակարևոր մասն մ՚ալ է նաև մարմնամարզութեան ահագին սրահը, որ առժամն երկաթով կառուցեալ, շատով պիտի վերածուի կանոնաւոր չինուածոյ մը՝ ու պիտի ունենայ ուսման պահանջած ամէն գործիք և միջոց։

Այժմ ձմեռուան համար պարտէզ մը կը չինուի Սիր Եռուարտ Կիւնրսի ծախիւք, որ Տըպլինի առաջին գարեջրագործն է, այս պարտէզը յարաբերութիւն ունենալով թէ գրատան և թէ կեդրոնական սրահին հետ, ջերմատէր բոյսեր և տունկեր պիտի պարունակէ, այնպէս որ հասարակ ժողովուրդը Լոնտրայի կլիմային տակ գաղափար մը կարենայ ունենալ հասարակածի ճոխ բուսաբերութեան։

Այս ամէնը հանգստեան և զբօսանաց համար. հաստատութեան միւս թեւը ըստ պատշաճի կը պարունակէ ազգայոց դաստիարակու-

digitised by A.R.A.R.@

թեան և կրթութեան համար ամէն կարևոր առարկայները, օրաւական և գիշերային դասախօսութեամբք. սակայն ասոնց համար մասնական կարգաւորութիւնք կան. տղայոց տարիքը տասուերկուքէն վար և քսանէն վեր պէտք չէ ըլլայ. նախակրթարանաց ընթացքն աւարտած պիտի ըլլան, և պէտք են պատկանիլ այնպիսի ընտանեաց՝ որոց տարեկան հասոյթն 5010 ֆռանքէն աւելի չըլլայ։ Ամբողջ տարեկան ընթացքին համար միայն 50 ֆրանք կը վճարեն։

Այս դասարանաց մէջ աւանդուած ուսումն և կրթութիւն, այնչափ մանրամասն և կատարեալ է որ բազմաթիւ ընտանիք որոց տարեկան եկամուտը վերը նշանակուածէն ալ շատ աւելի է, յանձն կ'առնուն տարեկան 250 ֆռանք վճարել, փոխանակ յիսունի, միայն թէ կարենան իրենց զաւակունք աւանդել այս դասարանաց։

Շատ երկայն կ'ըլլայ մի առ մի հաշուել անոր մէջ աւանդուած առուեստք և ուսմունք, դերձակութիւն, հիւսնութիւն, փորագրութիւն, հեռադրութիւն, լուսագրութիւն, և ամէն տեսակ առուեստք որ կ'աւանդուին, իւրաքանչիւրին ալ ուսումնական և տեսական մասամբք հանդերձ։ Ցերկուց սեռից ևս յամախող աշակերտաց թիւն էր անցեալ տարի 5500։

Եւ որովհետև այս հոյակապ շէնքը հաստատողաց դիտաւորութիւնը չէր ժողովրդեան միայն արտաքին և կարևոր պիտոյիցն օգնել, այլ որ աւելի կարևորն է, մտնել նոյն իսկ ընտանեաց ներքին կենաց մէջ, այս նպատակաւ ամենամեծ խնամքով հաստատեր են մասնական իգական դասարաններ կարի, խոհարարութեան, և տնական և տնտեսական այլ պիտոյից համար, ամէն ջանք ընելով տարուէ տարի կրկնապատկել աշակերտուհեաց թիւը։

Հիմկու հիմայ զբօսանաց մասնաճիւղքն, մասնաւորապէս երաժշտութեան դասարանքն՝ խմբերգակ բազմաթիւ ընկերութիւններ ձևացած են, կարգաւորեալ երաժշտական խումբ մը պարահանդէսներու համար, որ գէթ ամիսը մի անգամ տեղի կ'ունենայ կեդրոնական սրահին մէջ, և ուր ընդհանրապէս 20000 էն աւելի անձինք ներկայ կը գտնուին։

Այս կեդրոնական սրահին մօտ սենեակ մը կայ, ուր ընտանիք աշխատութենէ վերջը կը ժողովին շատախօսելու, խաղալու, զբօսնելու համար իրենց քաֆէն կամ թէյը խմելով։

Ահա այս եղաւ հոչակաւոր վիպասանին գրուածքին և գաղափարին արդիւնք։

digitised by A.R.A.R.@